Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«30»06 2025թ. № 7 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի « 30 » 07 2025թ.
N 5-25 նիստում, խորհրդի նախագահ՝ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) տնօրենի եվ դասախոսների գնահատման նպատակը և միջոցառումները:

1.2. Քոլեջի կրթական գործունեության որակի ապահովման գործընթացներում կարևորվում է տնօրենի գործունեության, դասախոսների դասավանդման որակի գնահատման իրականացումը: Տնօրենի և դասախոսների աշխատանքների գնահատման նպատակն է վերահսկել և բարձրացնել կրթության որակը, խթանել շարունակական մասնագիտական զարգացումը, ապահովել հաշվետվողականություն և վերհանել հնարավոր թերացումներն ու բարելավման ուղղությունները:

2. ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. Քոլեջի տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը իրականացնում է քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, որը քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները:

2.2. Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում քոլեջի գործունության մասին տնօրենի կողմից ներկայացվում է տարեկան հաշվետվություն՝ քոլեջի տվյալ տարվա գործունեության ներքին գնահատման տեղեկանք: Քոլեջի հիմնադիր փաստաթղթով՝ կանոնադրությամբ սահմանված կարգով (5.17 կետ) տնօրենը քոլեջի գործունեության ներքին գնահատման տեղեկանքը ներկայացնում է քոլեջի խորհրդի հաստատմանը, այնուհետև լիազոր մարմին (ՀՀ ԿԳՄՍՆ):

2.3. Ներքին գնահատման տեղեկանքում տնօրենը կատարում է քոլեջի գործունեության համակողմանի ներկայացում և գնահատում, ներկայացնում է քոլեջի տարեկան գործունեության արդյունքները բոլոր ուղղություններով՝ մասնավորապես՝ քոլեջի գործունեությունը նկարագրող վիճակագրական տվյալները,

քոլեջի ուսանողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը գնահատող ցուցանիշները և չափանիշները, քոլեջի գործունեության արդյունավետությունը գնահատող ցուցանիշները և չափանիշները, ուսանողական համակազմի վերաբերյալ քանակական և որակական տվյալները, ուսանողների առաջադիմության ցուցանիշները, պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները, տեղեկություններ պրակտիկաների վերաբերյալ, տեղեկություններ շրջանավարտների վերաբերյալ և այլն:

2.4. Տնօրենի գործունեության գնահատում իրականացվում է նաև դասախոսների և ուսանողների շրջանում անցկացվող հարցումների միջոցով, որոնք ուղղված են վերջիններիս բավարարվածության բացահայտմանը, կրթական կարիքների ուսումնասիրմանը և կրթական գործընթացի բարելավման առաջարկների ստացմանը:

3. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. Դասախոսների գնահատման խնդիրներն են քոլեջի դասախոսական անձնակազմի գործունեության մշտադիտարկումը, դասախոսի մասնագիտական, մանկավարժական, մեթոդական պատրաստվածության աստիճանի բացահայտումը, դասավանդման որակի գնահատումը:

3.2. Դասավանդման որակի գնահատման ուղղություններն են՝

- դասավադման գործընթացը,
- դասավանդման մոտեցումները և մեթոդները,
- դասախոսի մասնագիտական և մանկավարժական ունակությունները,
- ուսանող-դասախոս հարաբերությունների ձևավորման ունակությունները,
- ուսանողներին դասապրոցեսին ներգրավելու կարողությունը:

3.3. Դասախոսի գնահատման միջոցառումներ են՝

- ամբիոնի վարիչների կողմից անցկացվող դասալսումները, որոնց հիմնական նպատակն է դասավանդման գործընթացի արդյունավետության որոշումը և բարելավումը: Դասալսումների արդյունքների քննարկումները նպաստում են դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունների, կարողությունների բացահայտմանը, դասավանդման գործընթացի ուժեղ և թույլ կողմերի վերհանմանը և բարելավման ուղիների նախանշմանը,
- ուսումնական մասի կողմից դասախոսական անձնակազմի գործունեությանը և զարգացմանը հետևելը, դասալսումներ անցկացնելը, դասավանդման որակի գնահատում իրականացնելը,
- կրթության որակի պատասխանատուի կողմից ուսանողության շրջանում թղթային և էլեկտրոնային տարբերակներով անցկացվող հարցումները, որոնք ուղղված են ուսանողների կողմից ուսուցման մեթոդաբանության, ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքի և դասավանդման արդյունավետության գնահատմանը,
- դասախոսների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ամբիոնի վարիչներին ներկայացվող հաշվետվությունները, որոնք թույլ են տալիս գնահատել փաստացի կատարված աշխատանքները,
- արտաքին փորձագետների կողմից դասալսումների անցկացումը՝ դասավանդման գործընթացի ուսումնասիրման և գնահատման, առաջավոր փորձի փոխանցման նպատակով: